



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 150-Ա  
ք. Երևան

#### «ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի դեկտեմբերի 11-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ԻՆՏԵՐԼԻՆԿ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստաձրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստաձրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ

Վ. ՕԶԱՆՅԱՆ

<b>Հեռուստադրագրի անվանումը</b>	<b>Թույլտվության ժամկետի ավարտը</b>
«Discovery Channel» «Animal Planet» «Eurosport» «Discovery Science» «Setanta Sports» «Setanta Sports plus» «РТР- Планета» «Россия-К» «Россия 24»	31.12.2019թ.
«Viasat History» «Da Vinci» «Viasat Sport»	31.12.2019թ.
«ТНТ- Comedy» «ТНТ4 International» «Friday International»	31.12.2019թ.